ԱՐՏԱՇԵՍ ԿԱՐԻՆՅԱՆ

(Ծննդյան 100-ամյակի առթիվ)

Պրոֆ. Խ. Հ. ԲԱՐՍԵՂՅԱՆ

Լրացավ ականավոր բոլշևիկ-հեղափոխական, Անդրկովկասի կուսակցական, պետական նշանավոր գործիչ, մարքսիստ գրականագետ, պատմաբան, Հայկական ՍՍՀ ԳԱ ակադեմիկոս, սոցիալիստական աշխատանքի հերոս Արտաշես Կարինյանի ծննդյան 100-ամյակը։

Արտաշես Բալասիի Կարինյանը ծնվել է 1886 թ. նոյեմբերի 24-ին, Բաքու քաղաքի Բալախանի արվարձանում։ Նրա հայրը երկար տարիներ աշխատել է Երկրամասի արդյունաբերական խոշոր կենտրոնում՝ Բաքվի նավթարդյունաբերության մեջ։ Նախնական կրթությունը ստացել է հայրենի քաղաքում։ Ականատես է եղել դարասկզբին Բաքվում ծավալված պրոլետարական հեղափոխական շարժումներին, մայիսմեկյան փոթորկոտ ցույցերին ու մայրվանքներին, 1904 թ. քաղաքական խոշոր գործադուլին։ Բազմազգ պրոլետարիատի քաղաքական պայքարն իր բարերար ազդեցությունն է թողնում պատանի Արտաշեսի գաղափարական-քաղաքական դաստիարակության վրա։ Ռուսաստանյան առաջին ժողովրդական հեղափոխության նախօրեին, Բաքվի առաջին դիմադրության սան, տասնիններորդ Արտաշես Կարինյանը նետվում է ուսանող երիտասարդության հեղափոխական շարժումների հորձանուտը, գործուն մասնակցություն ցուցաբերում աշակերտական «Նաբատ» ալմանախի հրատարակությանը։ 1906 թ. «Բրուտ» ծածկանունով լույս է տեսնում նրա գրական երախայրիքը՝ «Գրականությունն և կյանք» գրականագիտական-հրապարակախոսական գրքույկը, որը նվիրված էր պրոլետարական գրականության հիմնադիր Մաքսիմ Գորկու «Հովեկներ» պիեսի արժեքավորմանը։ Հետագայում նա բազմիցս անդրադարձել է Մաքսիմ Գորկու ստեղծագործություններին, ըստ արժանվույն գնահատել դրանք, դարձել նրա երկերի պրոպագանդիստն ու գաղափարների տարածողը։

1905—1907 թթ. բոլշևիկյան հայ մամուլում, հատկապես «Կայծ» և «Ձայն» թերթերում, Լևոն Բրուտյան ստորագրությամբ, լույս են տեսնում նրա «Մեր նորագույն անարխիստները», «Մի կուսակցության էվոլյուցիայի մասին» (ընդդեմ էսեռների) և այլ հոդվածները։ «Մեր նորագույն անարխիստները» հոդվածում նա քողազերծում է կովկասյան անարխիստներին և նրանց արյունակից ու համախոհ դաշնակցականներին։ 1906—1910 թթ. Ա. Կարինյանը սովորել է և ավարտել Պետերբուրգի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը։ 1907 թ. շատ բախտորոշ եղավ նրա կյանքում։ Այն ժամանակ, երբ հեղափոխության վայրէջքի մթնոլորտում մտավորական հեղափոխական սոցիալ-դեմոկրատների մի մասը սկսեց հարել հակամարքսիստական այլևայլ հոսանքների, Արտաշես Կարինյանը Բաքվում մտավ բոլշևիկների կուսակցության շարքերը, դարձավ համոզված լենինյան։ 1907-ին նա անձնապես ծանոթացավ և գաղափարական բարեկամություն հաստատեց հավատարիմ լենինյաններ Ստեփան Շահումյանի, Սուրեն Սպանդարյանի, Ալյոշա Ջափարիձեի, Վլադիսլավ Կասպարովի, Իվան Ֆիոլետովի, Սարգիս Կասյանի, Մեշադի Աղիզբեկովի և այլ աննկուն բոլշևիկների հետ։ Սկսեց ակտիվ աշխատակցել Բաքվի բոլշևիկյան մամուլին՝ «Բակինսկի ռաբոչի», «Գուդոկ» և այլ թերթերին։ 1907-ին կովկասցի մի խումբ համալսարանական ուսանողների հետ միասին Արտաշես Կարինյանին բախտ վիճակվեց Ֆինլանդիայի Տերիոկի (այժմ Զելե-

նոգորսկ) քաղաքում տեսնել և լսել մեծահանճար առաջնորդ Վլադիմիր Իլյիչ Լենինին։ «Լսելով Լենինին,—գրել է նա,—մենք տեսանք և համոզվեցինք, որ նույնիսկ «ընթացիկ մոմենտի» մասին կարդացած իր զեկուցման մեջ ականավոր հեղափոխական տրիբունը միաժամանակ շատ խոհուն գիտնական էր, որի զեկուցման թե՛ կուռ հյուսվածքը և թե՛ մեթոդոլոգիան մեզ՝ երիտասարդ մարքսիստներիս համար շատ և շատ ուսանելի են։ Մոտավորապես երեք ժամ խոսեց Լենինը, և մենք լսում էինք անհագ ուշադրությամբ։ Բոլոր փաստերը նրա զեկուցման մեջ կապակցված էին միմյանց հետ և նորից հաստատում էին գալիք հեղափոխական նոր բեկումների անխուսափելիությունը»[1]։

Վ. Ի. Լենինին երկրորդ անգամ նա տեսել և լսել է փետրվարյան հեղափոխությունից հետո, 1917 թ. ապրիլին, Ֆինլանդական կայարանի հրապարակում։

Ինչպես տեղատվության, այնպես էլ նրան հաջորդած բանվորական հեղափոխական շարժման նոր վերելքի ժամանակաշրջանում, առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, 1917 թ. փետրվարյան բուրժուադեմոկրատական և Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության, ինչպես և Անդրկովկասում սովետական իշխանության հաստատման համար մղած պայքարում Ա. Կարինյանը եղել է առաջին գծում, պրոպագանդել է մարքսիստական-լենինյան գաղափարները, հրապարակախոսական ակտիվ գործունեություն է ծավալել, դասախոսություններով և զեկուցումներով հանդես է եկել բանվորական ժողովներում, նեցուկ դարձել բոլշևիկյան մի շարք պարբերականների, այդ թվում՝ մարքսիստական «Նոր խոսք» հանդեսին, «Սոցիալ-դեմոկրատ», «Պայքար» և այլ թերթերին։

Արտաշես Կարինյանի կենսապատումի, հատկապես ժուռնալիստական-հրապարակախոսական գործունեության ուշագրավ էջերից է Բաքվի ժամանակաշրջանը։ 1910-ին ավարտելով համալսարանը, նա վերադառնում է իր ծննդավայրը, շարունակում հեղափոխական պայքարը։ Նրա ժուռնալիստական գործունեության հետ սերտորեն առնչվում է 1911 թ. նոյեմբերից մինչև 1912 թ. հունվարը Բաքվում Ստ. Շահումյանի խմբագրությամբ լույս տեսած մարքսիստական հայերեն առաջին լեգալ հանդեսը՝ «Նոր խոսքը»։ Կապ հաստատելով այդ ժամանակ բանտում գտնվող Ստ. Շահումյանի հետ, Ա. Կարինյանը «Նոր խոսքը» վարում է բոլշևիկյան դիրքերից։ Նա ամեն բան անում է հայերեն բոլշևիկյան միակ պարբերականը պահպանելու, պրոլետարիատի գաղափարախոսության ամբիոն դարձնելու համար։ Նա ոչ միայն հանդեսի խմբագրական կոլեգիայի անդամ էր, նրա քարտուղարը, այլև հիմնական հոդվածների հեղինակներից։ «Նոր խոսքում» են լույս տեսել Ա. Կարինյանի «Գյուղացին ռուսահայ գրականության մեջ» (1911, № 1—2, 1912, № 5—6), «Գծեր արևմտահայ գրականությունից. Զոհրապ, Պարթևյան, Շահան Նաթալի» (1912, № 3—4), գրաքննադատական էսքիզներ՝ գրախոսականներ, նվիրված Վահան Տերյանի և Հակոբ Հակոբյանի բանաստեղծությունների ժողովածուներին։ Դրանք մարքսիստական հայ գրականագիտության առաջին գործերից են։

Ա. Կարինյանը «Նոր խոսքին» իր աշխատակցությամբ որոշակի ավանդ է ներդրել բոլշևիկյան հայ ժուռնալիստիկայի անդաստանում, ճանաչում գտել հեղափոխական պրոլետարիատի և հրապարակախոսների շրջանում։ Ռուսաստանի և Անդրկովկասի, այդ թվում՝ Հայաստանի աշխատավորության հեղափոխական դաստիարակության և համախմբվածության, մարքսիզմ-լենինիզմի տարածման գործում մեծ դեր է խաղացել լենինյան «Պրավդան», որի առաջին համարը լույս է տեսել 1912 թ. ապրիլի 22-ին (մայիսի 5-ին)։ Հայ անդրանիկ պրավդիստներից է և Արտաշես Կարինյանը։ 1913—1914 թթ. «Պրավդայում» հրատարակած իր հոդվածներով նա ճշմարտացիորեն արտացոլել է երկրամասի հասարակական-քաղաքական կյանքը, պաշտպանել գրականության ժողովրդայնության և քննադատական ռեալիզմի սկզբունքները։

---

[1] Հին բոլշևիկների հիշողությունները. գիրք երկրորդ, Երևան, 1961, էջ 34։

«Պրավդայում» են լույս տեսել Ա. Կարինյանի «Ռեալիզմի վերածնունդ» (տե՛ս «Պուտ Պրավդի», 26 հունվարի 1913, ստորագրությունը՝ Մ. Կալինին), «Մաքսիմ Գորկու «Հերիաթները» (23 փետրվարի, ստորագրությունը՝ Մ. Կալինին), «Բանվորի գրադարան» (30 մարտի), «Բաքվի գործագուլը և ազգային հարցը» («Տրուդովայա պրավդա», 4 հուլիսի 1914) և այլ արժեքավոր հոդվածները։

Հայաստանում մարքսիզմ-լենինիզմի դաղափարների պրոպագանդման գործում մեծ երախտիք ունի կրթված մարքսիստը։ «Պայքար», «Սոցիալ-դեմոկրատ», «Բանվորի կոիվը», «Բանվորի խոսքը», «Տեղեկատու», «Կարմիր դրոշակ», «Կոմունիստ» (Մոսկվա) և այլ պարբերականներում նա բեղմնավոր գործունեություն է ծավալել։ Դտնվելով հեղափոխական իրադարձությունների հորձանուտում, քայլ առ քայլ հետևել է քաղաքական կյանքին՝ հրապարակախոսության նյութ դարձնելով հեղափոխական դեմոկրատների ազատատենչ դաղափարները, ռուսական երեք հեղափոխությունների նշանավոր իրադարձությունները, բոլշևիկյան կուսակցության ստրատեգիական և տակտիկական խնդիրները, ականավոր հեղափոխականների սխրանքները։

Ա. Կարինյանի հեղափոխական գործունեությունը, հատկապես Բաքվի բոլշևիկյան կազմակերպության շարքերում, աննկատ չմնաց ցարական պահնորդության տեսադաշտից։ 1913 թ. նա մի խումբ բանվոր հեղափոխականների ու բոլշևիկների հետ միասին ձերբակալվում է և բանտ նետվում, իսկ հետո արտաքսվում Կովկասի սահմաններից հինգ տարի ժամանակով։ Նա աքսորվում է Յարիցին (այժմ Վոլգոդրադ), որտեղից անցնում է Պետերբուրգ և այնտեղ մնում մինչև 1917 թ. փետրվարյան հեղափոխությունը։ ՌՍԴԲԿ Պետրոգրադի կոմիտեի հանձնարարությամբ 1917-ի աշնանը Արտաշես Կարինյանը վերադառնում է Բաքու, պայքարում է երկրամասում սովետական կարգերի հաստատման ու ամրապնդման համար։ Ստ. Շահումյանի և Ա. Ջափարիձեի առաջարկությամբ նշանակվում է ռուսերեն լեզվով հրատարակվող Բանվոր, զինվոր և նավաստի պատգամավորների Բաքվի խորհրդի «Տեղեկատուի» գլխավոր խմբագիր, ընտրվում է Բաքվի խորհրդի գործկոմի անդամ։ «Տեղեկատուն» խոշոր դեր է խաղացել սովետական իշխանության առաջին դեկրետների ու միջոցառումների պարզաբանման, Բաքվի բազմազգ պրոլետարիատի դասակարգային համերաշխության և համախմբման գործում։

Արտաշես Կարինյանի հեղափոխական գործունեության լուսապսակն է կազմում 1918 թ. Ստ. Շահումյանի գլխավորած Բաքվի հերոսական կոմունայի արդարադատության կոմիսարի պոստում կատարած աշխատանքը։ Բաքվի կոմունան Անդրկովկասի ժողովուրդների բարեկամության և համախմբվածության լուսատու ջահն էր, մեծ Հոկտեմբերի դաղափարների կենդանի մարմնավորումը։ Արտաշես Կարինյանը Ստ. Շահումյանի, Ա. Ջափարիձեի, Մ. Ազիզբեկովի, Ի. Ֆիոլետովի, Գ. Կորգանովի (Ղորղանյան) և մյուս կոմիսարների հետ միասին մշակում է կոմունայի սոցիալիստական օրենսդրական ակտերը, հետևում սոցիալիստական օրինականության պահպանմանը, լենինյան ցու-

ցումների կատարմանը, գործուն մասնակցություն ցուցաբերում ներքին և արտաքին թշնամիների դեմ մղվող պայքարին։

Կոմունայի ժամանակավոր անկումից հետո Արտաշես Կարինյանը 1918—1920 թթ. աշխատել է Մոսկվայում՝ ՌՍՖՍՀ-ի ազգությունների ժողովրդական կոմիսարիատին կից հայկական գործերի կոմիսարիատում, խմբագրել է «Կոմունիստ» շաբաթաթերթը, հրատարակչական բեղմնավոր գործունեություն ծավալել։ Մարքսիստական այդ պարբերականում և «Բանվորի խոսքում» են (Բաքու) լույս տեսել նրա «Վերջին պայքարը», «Անգլիական իմպերիալիզմը և Արևելքը», «Հայ լիբերալները և Տաճկահայաստանը», «Տաճկահայաստանը և հեղափոխական սոցիալ-դեմոկրատիան», «Տաճկահայաստանը և եվրոպական իմպերիալիստները» և այլ հոդվածները։

1919 թ. մայիսից մինչև սեպտեմբերը Ա. Կարինյանի խմբագրությամբ Մոսկվայում հրատարակվել է ՌՍՖՍՀ ազգությունների ժողկոմատին կից հայկական գործերի կոմիսարիատի օրգան «Կարմիր դրոշակ» թերթը։ «Հրանտ», «Լինչ», «Ա. Կ.», «Ջոն» և այլ ստորագրություններով լույս են տեսել Կարինյանի բազմաթիվ հոդվածներ, այդ թվում՝ «Անդրկովկասի արդի կացությունը», «Բրեստ և Վերսալ», «Անկախ Հայաստան», «Հայ ժողովրդի թշնամիները», «Կովկասյան պրոլետարիատի պարաղլուխները», «26 կոմիսարների հիշատակին» և այլն։

Արտաշես Կարինյանը Անդրկովկասում սովետական իշխանության հաստատման համար մղած պայքարի ակտիվ ջատագովներից է, պրոլետարական ինտերնացիոնալիզմի համոզված պաշտպան։ Նրա հրապարակախոսությունը ներծծված է հայրենասիրության և ժողովուրդների բարեկամության գաղափարներով։

1921 թ. ՀամԿ(բ)Կ Կենտկոմի կազմբյուրոյի որոշմամբ Ա. Կարինյանը մոբիլիզացվում և ուղարկվում է Հայաստան, Ալ. Մյասնիկյանի գլխավորած Սովետական Հայաստանի առաջին կառավարության կազմում ստանձնում արդարադատության ժողկոմի պաշտոնը։

1921—1922 թթ. Հայաստանի կոմկուսի Կենտկոմի և Հայկական ՍՍՀ ժողկոմխորհի որոշմամբ եղել է արտասահմանում՝ Թուրքիայում և Ամերիկայի Միացյալ Նահանգներում, ծանոթացել է հայկական գաղթօջախներին՝ համայնքներին, աշխատանք է կատարել սփյուռքահայության շրջանում։ Հետագայում աշխատել է կուսակցական-սովետական ղեկավար մարմիններում՝ եղել է Հայաստանի Կենտգործկոմի նախագահի տեղակալ (1923—1924), նախագահ (1924—1928), ՀամԿ(բ)Կ Անդրերկրկոմի պատմության ինստիտուտի դիրեկտորի տեղակալ (1932—1933), Հայկական ՍՍՀ լուսժողկոմի տեղակալ (1933—1934)։ Խմբագրել է «Նոր ուղի», «Անդրկովկասի ժողովրդական տնտեսություն» հանդեսները։ Արտաշես Կարինյանը բազմիցս ընտրվել է Հայաստանի կոմկուսի Կենտկոմի անդամ, ՀՍՍՀ Կենտգործկոմի և Անդրկենտգործկոմի նախագահության կազմում, եղել է ՀԿԿ Կենտկոմի բյուրոյի անդամ։

1940-ական թթ. սկսած Արտաշես Կարինյանը, իբրև գրականագետ-պատմաբան փոխադրվում է գիտական աշխատանքի, արգասավոր գործունեություն ծավալում Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայում՝ սկզբում Մ. Աբեղյանի անվան գրականության, իսկ հետո՝ պատմության ինստիտուտներում։ 1956 թ. ընտրվել է Հայկական ՍՍՀ ԳԱ իսկական անդամ, եղել է ՀՍՍՀ ԳԱ հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար (1960—1963), ԳԱ վիցեպրեզիդենտի պաշտոնակատար (1963—1965), ՍՍՀՄ Մինիստրների խորհրդին առընթեր գրականության և արվեստի բնագավառում Լենինյան մրցանակներ շնորհող կոմիտեի անդամ։ Նրան շնորհվել է գիտության վաստակավոր գործչի կոչում (1961), պարգևատրվել է Լենինի երկու, Աշխատանքային Կարմիր դրոշի, Հոկտեմբերյան հեղափոխության շքանշաններով։ Հեղափոխական շարժումներին մատուցած ծառայությունների և գիտության զարգացման գործում ներդրած ծանրակշիռ ավանդի համար 1976 թ. Արտաշես Կարինյանին շնորհվել է սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչում։

* * *

Արտաշես Կարինյանը Ստ. Շահումյանի, Ս. Սպանդարյանի, Ա. Մյասնիկյանի և այլոց հետ միասին հանդիսանում է հայ մարքսիստական գրաքննադատության հիմնադիրներից մեկը։ Նա նշանավոր գրականագետ և պատմաբան էր, հայ հասարակական մտքի պատմության խոր գիտակ։ Սկսած իր «Գրականություն և կյանք» հոդվածից, որը հրատարակվել է 1906 թ. մինչև մահից առաջ լույս տեսած «Ժողովուրդների եղբայրության դրոշի ներքո» ստվար ժողովածուն և այլ գրքույկներն ու հոդվածները, Ա. Կարինյանը հրապարակել է ավելի քան 450 մեծ ու փոքր մենագրություն, հոդված, ակնարկ, հուշ, գրախոսություն, որոնք տոգորված են գիտականության, ճշմարտության, լենինյան կուսակցականության և սկզբունքայնության ոգով։ Նրանք փաստական հարուստ նյութ և ընդհանրացումներ են պարունակում, աչքի են ընկնում ինքնատիպ եզրահանգումներով, կրում են ժամանակի կնիքը։

Լայն ու համակողմանի են Ա. Կարինյանի գիտական, ժուռնալիստական-հրապարակախոսական գործունեության շրջանակները։ Նրա հոդվածներն ու աշխատությունները նվիրված են հայ հասարակական-քաղաքական մտքի և մամուլի պատմությանը, հեղափոխական շարժումներին և կոմունիստական կազմակերպությունների գործունեությանը, ռուս գրականությանը ու համաշխարհային մշակույթին, հայ-ռուսական հարաբերություններին, ժողովուրդների եղբայրությանն ու բարեկամությանը, կոմունիստական շինարարությանը, մարքսիզմ-լենինիզմին։

Կարինյանը հայ ժողովրդի հեղափոխական պայքարի, սոցիալիստական հոյակապ վերափոխությունների գործուն մասնակիցն է և տարեգիրը։ Նա անմոռաց էջեր է թողել Անդրկովկասի բոլշևիկյան մամուլի պատմության մեջ, ղեկավար մասնակցություն ցուցաբերել մարքսիստական հայ մամուլի ձևավորման ու զարգացման հույժ կարևոր գործին։ Իբրև ժուռնալիստ-հրապարակախոս արձագանքել է ժամանակի իրադարձություններին։ Արտաշես Կարինյանի գրչին են պատկանում «Հայաստանի ապագան» (1919), «Ալ. Մարտունի-Մյասնիկյան» (1925), «Հայ ազգայնականների ուղին» (1926), «Դեմքեր և դեպքեր», (1928), «Դաշնակցությունը և իր զինակիցները» (1931), «Անտոն Չեխով» (1954), «Գրական արձագանքներ» (1955), «Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության» (հ. 1—2, 1956, 1960), «Գրական-քննադատական հոդվածներ» (1962), «Հովհաննես Թումանյան» (1971), «Եղիշե Չարենց» (1972), «Մամուրյանը մշակույթի պատմության մասին» (1973), «Ժողովուրդների եղբայրության դրոշի ներքո» (1976) և այլ աշխատություններ։

Մեծ է նրա վաստակը հայ-ռուսական հարաբերությունների, ռուս ժողովրդի առաջատար դերի, Բաքվի կոմունայի և նրա ղեկավարների՝ Ստ. Շահումյանի, Ա. Ջափարիձեի, Մ. Ազիզբեկովի, Ի. Ֆիոլետովի, Ցա. Զեվինի և մյուս կոմիսարների հեղափոխական գործունեության լուսաբանության ասպարեզում։ Հայ ժողովրդի նոր և նորագույն շրջանի և Հայաստանի կոմկուսի պատմության մի շարք հարցեր Ա. Կարինյանը քննարկել է «Իմպերիալիստական պատերազմը և Հայաստանը», «Հեղափոխական և ազգային շարժումները Անդրկովկասում 1905-ին» և այլ աշխատություններում։ Նա առաջիններից մեկն է եղել, որ ձեռնարկել է լեգենդար հեղափոխական Կամոյի (Սիմոն Տեր-Պետրոսյանի) կենսապատումը ստեղծելու։ «Կամո» ակնարկում, որ առաջին անգամ լույս է տեսել 1958 թ., Կարինյանը գրում է, որ 1919-ին Մոսկվայում իր խնդրանքով Կամոն պատմել է հուշերը, իսկ ինքը գրի է առել, շուրջ 180 էջ։ «Ես աշխատում էի վերարտադրել նրա պատմությունը,—գրում է Ա. Կարինյանը,—առանց «նախշելու» կամ գեղազարդելու, ճշտիվ արձանագրում էի միմիայն նրա խոսքերը և մերթ ընդ մերթ հարցեր տալով պարզում անորոշ մանրամասները կամ հպանցիկ խոսքերը։

Հետագայում այդ թերթիկները կորան և անհետացան՝ ինձնից անկախ պատճառներով»[2]։ Թեև նա կորցրել է իր գրառումները, բայց շուրջ չորս տասնամյակ անց նա կրկին անդրադարձավ այդ թեմային և գրեց իր արժեքավոր հուշ-նովելներից մեկը։ Արտաշես Կարինյանի գիտական-հրապարակախոսական գործունեության մեջ գերակշիռ է գիտության, գրականության, մշակույթի պրոպագանդան։ Նա նույն հաջողությամբ գրել է Ամիրդովլաթի և Ալիշեր Նավոյիի, Անտոն Չեխովի և Մովսես Արազու, Ջորջ Բայրոնի և Գրիգոր Զոհրապի, Ալեքսանդր Գրիբոյեդովի և Գրիգոր Արծրունու, Չարլզ Դիկկենսի և Դրաստամատ Տեր-Սիմոնյանի, Էմիլ Վերհարնի և Էգգար Շահինի, Միքայել Նալբանդյանի և Տարաս Շևչենկոյի, Ռոմեն Ռոլանի և Ստեֆկա Ռազինի և ուրիշ շատ ու շատերի մասին։ Նա միևնույն բանիմացությամբ գրել է ադրբեջանական պոեզիայի անթոլոգիայի և Անատոլ Ֆրանսի, Գերցենի և Սաբիրի, Մարատի և Կորնեյ Չուկովսկու, Շեքսպիրի և Պուշկինի, հեթանոս հայերի և Ա. Ռադիշչևի, «Հյուսիսափայլ» հանդեսի և Մարտիրոս Սարյանի, Բաֆֆու և Օսկար Ուայլդի մասին։ Հրապարակախոսական ժանրերից Կարինյանը ամենից շատ օգտագործել է գրախոսությունը։ Նա ավելի քան 100 գրախոսության հեղինակ է։ Իսկ թե քանի նիշով են հաշվվում նրա կարդացած գրքերը, ոչ ոք, այդ թվում և ինքը, չէր կարող հաշվել, քանզի նա մեր երկրի եզակի գրասերներից էր։ Ա. Կարինյանի գրական ժառանգությունը հանրագիտարանի տպավորություն է թողնում, որը ամենից առաջ հեղինակի համակողմանի զարգացման, գիտական էրուդիցիայի առհավատչյան է։ Տասնյակ տարիներ նա անխոնջ հետևել է հասարակական-քաղաքական, գրական-մշակութային շարժման կենդանի ու կրակոտ իրադարձություններին, բոլշևիկյան ուղղամտությամբ միջամտել նրանց ընթացքին և նպաստել սովետահայ մտավորականության առաջընթացին։ Կանգնած լինելով սոցիալիստական ռեալիզմի գրականության օրրանի մոտ՝ նա խոր բանիմացությամբ, գրականության կուսակցականության լենինյան սկզբունքների բարձրակետից ակտիվ մասնակցություն է ցուցաբերել նրա հիմնարար դրությունների մեթոդաբանական պրոբլեմների մշակմանը, հարվածել թերահավատներին, տեսականորեն պաշտպանել սոցիալիստական գրականության իրավունքը։ Նրա գործունեության անբաժան մասն է կազմում բուրժուական գաղափարախոսության, դաշնակցության, մարքսիստական և լենինյան գաղափարները նենգափոխողների, ռենեգատների և ուիգիոնիստների դեմ մղած անհաշտ և հետևողական պայքարը։

1934 թ. լույս է տեսել Ա. Կարինյանի երկերի ժողովածուի առաջին հատորը, որում զետեղված են բոլշևիկյան մամուլում հրապարակված ավելի քան 35 հոդված։ Հետագայում հրատարակվել են նրա «Նալբանդյանը և XIX դարի 60-ական թվականների ռուս առաջավոր գործիչները», «Չերնիշևսկին և սլավերական մամուլի մի քանի հարցեր», «Հոկտեմբերյան հեղափոխությունը և հայ մշակույթի ծաղկումը», «Պրավդան» նախահոկտեմբերյան տարիներին», «Անդրկովկասի ժողովուրդների կուլտուրական համագործակցությունը»։ 1962 թ. լույս տեսավ Ա. Կարինյանի «Գրական-քննադատական հոդվածներ» ժողովածուն։ Նրանում տեղ են գտել գիտնականի տարբեր ժամանակներում հրատարակած այն հոդվածները, որոնք քննարկում են գրական-ժառանգության սկզբունքները։ Սույն ժողովածուն Ա. Կարինյանի գրականագիտական հոդվածների ընտրանին է։ Առաջին բաժնում զետեղված են նախահոկտեմբերյան շրջանում բոլշևիկյան «Պրավդայում» տպագրված հոդվածները։ Այնուհետև նոր խմբագրությամբ, մասնակի կրճատումներով, լրացումներով և փոփոխություններով զետեղվել են «Բայրոն և Ստենդալ», «Բայրոն և Թումանյան», «Ռոմեն Ռոլան», «Տարաս Շևչենկո», «Ռադիշչև», «Պուշկինն այսօր», «Գոգոլի ուղին», «Մաքսիմ Գորկի», «Միխայիլ Շոլոխով» ուսումնասիրությունները, «Աշխատանքի մոտիվները սովետական գրականության մեջ», «Մ. Նալբանդյանը և 60-ական թվականների ռուս առաջավոր գործիչները», «Ռուս-հայ գրական կա-

2 Տե՛ս «Հին բոլշևիկների հիշողությունները». գիրք առաջին, Երևան, 1958, էջ 134։

պերից», «Եղիշե Չարենցի ստեղծագործական ուղին», «Հոկտեմբերյան ռևոլյուցիան և հայ մշակույթի ծաղկումը» և գրաքննադատական այլ ակնարկներ։

Կարինյանը ինչպես վերոհիշյալ, այնպես էլ այլ աշխատություններում ջանում է աղատվել անցյալում թույլ տված սխալ ձևակերպումներից ու գնահատումներից, որոնց վրա, անշուշտ, վաղանցուկ ժամանակի կնիքն է եղել, փորձում է նորովի մեկնաբանություններ տալ, արձագանքում է նոր ժամանակներին և գրականագիտության արդի պահանջներին։ Առհասարակ Ա. Կարինյանը իր ժամանակի ծնունդն է։ Նրա աշխատությունները, հատկապես գրաքննադատական և պատմագիտական հոդվածները, իրենց անուրանալի արժեքավորությամբ, զերծ չեն թերություններից, առանձին դեպքերում՝ սխալներից, կյանքի և պատմության կողմից մերժված տեսակետներից ու կոնցեպցիաներից։ Դա դդում էր նաև ինքը։ Այդ է պատճառը, որ կյանքի վերջին տարիներին նա վերանայում էր իր գործերը, թարմացնում, պատրաստում նոր հրատարակության։

1976 թ. լույս տեսավ «Ժողովուրդների եղբայրության դրոշի ներքո» հոդվածների ժողովածուն, որտեղ զետեղված են Կարինյանի՝ սովետական մամուլում հրապարակված գրաքննադատական, գիտական, հրապարակախոսական ակնարկները։ Գրքում տեղ են գտել 49 հոդված. այդ թվում՝ «Բայրոն և Թումանյան», «Գոգոլի ուղին», «Ռուսահայ գրական կապերի պատմությունից», «Հոկտեմբերյան հեղափոխությունը և մշակույթի ծաղկումը», «Ռուսական տպագրության 400-ամյակը» և այլ նյութեր։ Ժողովածուում զետեղված շատ նյութեր, որ քաղված են «Գրական-քննադատական հոդվածներ» գրքից, հեղինակի կողմից նորից են նայվել և խմբագրվել։ Կան նաև նոր հոդվածներ, ինչպես, օրինակ, «Մեծ հումանիստ-գրող Հակոբ Պարոնյանը», «Բաֆֆին և իր ռևակցիոն քննադատը», «Նոր Սարյանը», «Դրաստամատ Տեր-Սիմոնյան» և այլն։

Ակադեմիկոս Ա. Կարինյանը «Ժողովուրդների եղբայրության դրոշի ներքո» ժողովածուն համարում էր իր հրապարակախոսական և գրական-քննադատական հոդվածների ընտրանին։ Առաջին բաժնում տեղ գտած ինը այլ հոդվածների հետ միասին ռուսերեն լեզվով զետեղված են երեք չափազանց ուշագրավ հոդվածներ, որոնք նվիրված են Բաքվի 1917—1918 թթ. բոլշևիկյան մամուլի պատմությանը։ «Բաքվի պարբերական մամուլի բնութագրման շուրջը», «Կուսակցական խոսքի շարքայինները» և «1918 թվականի Բաքվի կոմունայի օրերին կուլտուրական ճակատում» հուշագրություններում, որ առաջին անգամ լույս են տեսել 1966 թ. Ադրբեջանական ՍՍՀ ԳԱ «Տեղեկագրում», փաստական հարուստ նյութերի և սեփական դիտարկումների հիման վրա հյուսվել են կոմունայի պատմության համեմատաբար քիչ ուսումնասիրված բնագավառի՝ կուլտուրական ճակատի դրվագները։ Բաքվի կոմունայի գործունեության ընդհանուր ֆոնի վրա բացվում են «Բակինսկի Ռաբոչի», «Բանվորի խոսք», «Տեղեկատու», «Սոցիալ-դեմոկրատ» և բոլշևիկյան այլ պարբերականների հեղափոխական կոչերով, ճշմարտացի խոսքով հագեցած էջերը։ Հեղինակը խորապես բացահայտել է ականավոր հեղափոխական, ժուռնալիստ-հրապարակախոս և խմբագիր Ստեփան Շահումյանի անձանձիր գործունեությունը, խոշոր ավանդը կոմունիստական շարժման և նրա մամուլի պատմության մեջ։ Հաջող է տրված Կովկասի բոլշևիկյան մամուլի պայքարը բուրժուական նացիոնալիստական մամուլի, դաշնակցական, մուսավաթական գրչակների դեմ։ Արժեքավոր փաստեր կան Բաքվի կոմունայի տպագիր օրգաններից՝ «Տեղեկատու» թերթի և նրա խմբագիր Անաստաս Միկոյանի հեղափոխական-ժուռնալիստական գործունեության մասին։ Բոլշևիկյան մամուլի պատմաբանները, հատկապես Անդրկովկասի պատմաբանները, տակավին ըստ ամենայնի չեն բացահայտել մամուլի շարքային աշխատակիցների և թղթակիցների ծառայությունները։ Օգտակար են այդ ուղղությամբ Ա. Կարինյանի թափած ջանքերը։ Նա ստեղծել է մի շարք բանվոր հեղափոխականների կենսապատումը, բացահայտել է նրանց հրապարակախոսական-ժուռնալիստական գործունեությունը։ Մա-

մուլի պատմության հարցերը լուսաբանություն են ստացել նաև Ա. Կարինյանի «Պրավդան» նախահոկտեմբերյան տարիներին» հուշագրությունում։ «Բայրոն և Թումանյան» ակնարկում հեղինակը ցույց է տվել Բայրոնի ազդեցությունը Հովհաննես Թումանյանի, նրա գեղարվեստական ստեղծագործությունների վրա։ «Պուշկինն այսօր» ակնարկը, որ գրել է 1949-ին, աչքի է ընկնում մտքի խորությամբ և ինքնատիպ եզրահանգումներով։

Շատ նորություններ կան Հակոբ Պարոնյանին նվիրված աշխատության մեջ։ Հ. Պարոնյանը և՛ գեղագիր էր, և՛ հրապարակագիր։ Նա հարազատ և սիրելի էր ոչ միայն արևմտահայ, այլ նաև արևելահայ դեմոկրատական լայն խավերին։ Պարոնյանը հայ երգիծական գրականության ռահվիրան է. նրա մտրակը միշտ շաչել է հարստահարողների վրա։ «Բաֆֆին և իր ռեակցիոն քննադատը» հոդվածում ճշմարտապատում կերպով տրված է հայ մեծանուն վիպասանի, հայրենասերի և հումանիստի պատմական դերը, քննադատված Հայկունու՝ ավագ քահանա Եղիշե Գեղամյանի ռեակցիոն նկրտումները։

Ա. Կարինյանը տարբեր տարիների անդրադարձել է Եղիշե Չարենցի գրական ստեղծագործության գնահատմանը։ 1972 թ. առանձին գրքույկով լույս է տեսել նրա «Եղիշե Չարենց (հոդվածներ և հուշեր)» ժողովածուն։ 1976-ին «Ժողովուրդների եղբայրության դրոշի ներքո» գրքում զետեղվել է «Եղիշե Չարենցի ստեղծագործական ուղին» ծավալուն ուսումնասիրությունը։ Նրանում հանգամանորեն քննարկված են Չարենցի՝ Վ. Ի. Լենինին, հեղափոխությանը, ազատարար Հոկտեմբերին նվիրված բանաստեղծական շարքերը։ Չարենցի մասին իր կյանքի վերջին տարիներին գրած ուսումնասիրություններում Կարինյանն ազատագրվել է 1920—1930-ական թթ. թույլ տված իր սխալներից, վերագնահատել մեր ժամանակի ամենատաղանդավոր հայ բանաստեղծին, հեղափոխության երգչին։

Ակադեմիկոս Ա. Կարինյանը ոչ միայն նշանավոր գրականագետ էր, ժուռնալիստ-հրապարակախոս, այլև պատմաբան, հայ հասարակական-քաղաքական մտքի պատմության տեսաբան։ Նրա աշխատությունները զգալի ներ են խաղացել հայ ժողովրդի պատմության նոր և նորագույն շրջանի պրոբլեմների գիտական լուսաբանության ասպարեզում։ Փույթ չէ, որ նրա առանձին գրույթներ սխալ են և անընդունելի։ Բայց նույնիսկ դրանք առիթ են ծառայել գիտական բանավեճերի համար, օգնել են ճշմարտության բացահայտմանը։ Ա. Կարինյանի հեղափոխական, գիտական գործունեությանը բնորոշ է բուրժուական գաղափարախոսության, այդ թվում՝ բուրժուանացիոնալիստական դաշնակցություն կուսակցության և նրա պարագլուխների դեմ մղած անհաշտ ու հետևողական պայքարը։ Այդ տեսակետից ուշագրավ է գիտնականի «Դաշնակցությունը և նրա զինակիցները» գիրքը, որը լույս է տեսել 1932 թ.։ Նրանում տեղ են գտել «Դասակարգային պայքարը և իդեոլոգիական աշխատանքի պրոբլեմները», «Հայ բուրժուազիայի իդեոլոգիական պայքարի պատմությունից», «Բաքվի կոմունան և դաշնակցությունը», «Քաղաքացիական պատերազմը Հայաստանում» և այլ հոդվածներ։ Ինչ խոսք, դրանցում շոշափված որոշ հարցեր այժմ նորովի են պարզաբանվում։

Ա. Կարինյանի գրվածքներում ուրույն լուսաբանում են գտել արևմտահայ հասարակական-քաղաքական կյանքի հարցերը։ Նա լավ գիտեր իր ժամանակի հայկական սփյուռքը և արևմտահայ գրականության ու մշակույթի գործիչներին։ Արևմտահայ գրականության ու հասարակական մտքի ներկայացուցիչների մարքսիստական գնահատման համար արժեքավոր են «Մ. Մամուրյանը մշակույթի պատմության մասին», «Արևմտահայ լուսավորիչները 1860—70 թվականներին» և այլ հոդվածները։

Արտաշես Կարինյանի երկարամյա գիտահետազոտական պրպտումների արգասիքն են «Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության» առաջին երկու մեծադիր գրքերը։ «Ակնարկները» գիտնականի «գլխավոր գիրքն է»։ Առաջին հատորը, որ լույս է տեսել երեսուն տարի առաջ, 1956 թ., ընդգրկում է գաղութահայ համայնքների և հնդկահայ պարբերական մամուլի նկարագրա-

կան ուրվագծերը։ Հատորն ունի «Նախաբան» և կազմված է հետևյալ բաժիններից՝ «Նյութեր և աղբյուրներ», «Գաղութահայ օջախները XVII—XVIII դարերում», «Հայ մամուլի և հրապարակախոսության սկզբնավորողները», «Հնդկահայ պարբերական մամուլը» («Ազդարար», «Շտեմարան», «Ազգասեր», «Ազդասեր արարատյան», «Ուսումնասեր», «Եղբայրասեր»), «Վերջաբան»։ Գիտնականը պատշաճն է տվել պրոբլեմի նախորդ մշակողներին, մատենագետներին, ըստ արժանվույն գնահատել նրանց գիտական վաստակը։ Հաջող է ներկայացված հայ պարբերական մամուլի սկզբնավորումը, գաղթօջախների (սփյուռքի) և նրանց մամուլի, խմբագիրների, տպարանների պատմությունը։ Հատորն ամբողջությամբ վերցրած նորույթ էր։ Բայց այն զերծ չէ նաև բանավեճ հարուցող ձևակերպումներից, նյութի կրկնություններից։ «Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության» երկրորդ հատորը (1960) բովանդակում է Արևմտյան Եվրոպայում՝ Իտալիայում (Վենետիկ), Ավստրիայում (Վիեննա) և ապա Ֆրանսիայում (Փարիզ) XIX դարի սկզբից մինչև 70-ական թթ. հրատարակված հայ պարբերականների պատմությունը։ Հատորը բացվում է «Գաղութահայ մտքի ներկայացուցիչները Արևմտյան Եվրոպայում XIX դարի առաջին հիսնամյակին» և «Գաղութահայ պարբերականների առաջին խմբագրի մտահայեցությունը» ծավալուն ուսումնասիրությամբ։ Թեև, ինչպես ասվեց, հեղինակի որոշ հարցադրումներ առարկություններ են հարուցում, բայց հատորում ընթերցողը հարուստ նյութեր է գտնում Մխիթարյանների, հատկապես Ղուկաս Ինճիճյանի գործունեության վերաբերյալ։ Ղ. Ինճիճյանի խմբագրությամբ է 1800—1802 թթ. Իտալիայում հրատարակվել «Տարեգրություն» պարբերականը։ Արևմտահայ պարբերականների համակարգում, հիրավի, յուրահատուկ տեղ ունեն Մխիթարյան միաբանության հրատարակությունները՝ «Տարեգրություն», «Եղանակ բյուզանդյան», «Բազմավեպ», «Եվրոպա» և այլն։

Ղուկաս Ինճիճյանն է խմբագրել նաև «Եղանակ բյուզանդյանը» (1803—1820)։ Գիտնականը ստեղծել է Ղ. Ինճիճյանի դիմապատկերը, ըստ ամենայնի գնահատելով նրա խմբագրական-հրապարակախոսական գործունեությունը։

Հայ պարբերական մամուլի պատմության մեջ ինքնուրույն տեղ ունի «Բազմավեպը», որ հրատարակվում է 1843 թ. ի վեր։ Նրա առաջին խմբագիրն էր Գաբրիել Այվազովսկին։ Ա. Կարինյանը, գրքի 138 մեծադիր էջերում, հանգամանորեն շարադրել է «Բազմավեպի» պատմությունը, ընդգծել նրա տեղն ու դերը հայ մշակույթի, մասնավորապես մամուլի պատմության մեջ։

Գրքում քննարկված է փարիզահայ մամուլի՝ «Մասյաց աղավնիի», Ա. Մուրադյանի «Փարիզ», Ստեփան Ոսկանի «Արևելք»—«Արևմուտք» և այլ պարբերականների գործունեությունը։ Լավ է տրված «Արևելք» (1855—1856), «Արևմուտք» (1859—1864) պարբերականների և նրանց խմբագիր Ստեփան Ոսկանի, նրա շուրջը համախմբված աշխատակիցների և ակտիվ ընթերցողների հասարակական-քաղաքական հայացքների բնութագրությունը։

Ա. Կարինյանի «Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության» աշխատության երկու հատորները, որ աչքի են ընկնում նյութի հարստությամբ և գիտականությամբ, արժեքավոր ներդրում են հայ հասարակական մտքի, մշակույթի և մամուլի պատմության մարքսիստական-լենինյան լուսաբանության գործում։

Արտաշես Կարինյանը, ինչպես ճիշտ կերպով նկատել է ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանը, քայլող հանրագիտարան էր, թունդ գրքասեր, ժամանակի մեծ մասը նվիրում էր ընթերցանությանը։ Գիրքը նրա համար կյանք էր։ Կարդում էր հումանիտար, գիտատեխնիկական, գեղարվեստական գրականություն, գրքերի լուսանցքներում ուշագրավ նշումներ կատարում, գրախոսություններ գրում։ Ընթերցողն սպասում էր նրա հուշագրություններին։

Մի առիթով Մաքսիմ Գորկին ասել է՝ մարդն ապրում է համակված մի քանի կյանքով։ Այդպիսին էր և Արտաշես Կարինյանի անցած ճանապարհը։

Բայց նրա կյանքի գլխավոր իմաստը հավատն ու նվիրումն էր հայրենիքին, դիտությանը, գաղափարին։

Ակադեմիկոս Արտաշես Կարինյանը կոմունիստ գիտնականի իսկական տիպար էր։ Նա ապրեց բնասալից կյանքով։ Երախտագետ սերունդները չեն մոռանա նրա բարի անունն ու գործը։

АРТАШЕС КАРИНЯН
(К 100-летию со дня рождения)

Проф. Х. А. БАРСЕГЯН

Резюме

В ноябре 1986 г. исполняется 100-летие со дня рождения видного большевика-революционера, партийного и государственного деятеля Закавказья, литературоведа-марксиста, историка, академика АН Армянской ССР, Героя Социалистического Труда Арташеса Баласневича Карияна.

В статье рассматривается плодотворный жизненный путь профессионального революционера из ленинской когорты, неутомимого ученого, журналиста-публициста. Велика заслуга А. Карияна в создании и развитии армянской большевистской периодической печати, литературной критики, в разработке проблем общественно-политической мысли, армяно-русских взаимосвязей, в пропаганде мировой культуры, в частности, русской литературы. А. Карияян был одним из первых армянских «правдистов»-публицистов, который в 1912—1914 гг. активно сотрудничал в большевистской «Правде».

Основным научным трудом А. Карияна является двухтомное исследование «Очерки истории армянской журналистики», которое было тепло принято научной общественностью. В статье проанализированы, в частности, литературно-критические исследования академика А. Карияна. Видный коммунист-ленинец оставил яркий след в истории армянской литературы и культуры.